(Չի գործում 2016 թվականի մայիսի 1-ից)

Տպագրված է 3 օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
23/08/ 2010թ թիվ 3-Լ որոշմամբ

Փոփոխված է 13/09/2010 թիվ 12-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
(վերջին փոփոխությունը գրանցված է)
«15» սեպտեմբերի 2010թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-006

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ” ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալներին վճարվող միջնորդավճարների առավելագույն չափը)

ԵՐԵՎԱՆ - 2010

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

1. Ապահովագրական գործակալի (գործակալների) միջնորդությամբ կնքված յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրական գործակալին (գործակալներին) ապահովագրական ընկերության կողմից վճարվող միջնորդավճարի (կոմիսիոն վարձատրության) առավելագույն չափը տվյալ ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրական ընկերության կողմից ստացված ապահովագրավճարի 15 տոկոսն է: Սույն որոշմամբ սահմանված միջնորդավճարի չափի հաշվարկի մեջ են մտնում տվյալ գործակալին (գործակալներին) ցանկացած ձևով տրվող այն հատուցումները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինի (վերջիններին) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը միջնորդելու գործընթացի հետ: